ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀՐԱՎԵՐԻ ՊԱՐԶԱԲԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2025 թվականի սեպտեմբերի 12-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԾԱԾԿԱԳԻՐԸ «ՇՄՆ-ԲՄ-ԱՊՁԲ-25/11»

Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կարիքների համար «Օդերևութաբանական ռադիոլոկացիոն կայանի» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՇՄՆ-ԲՄ-ԱՊՁԲ-25/11» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 2025 թվականի սեպտեմբերի 11-ին ժամը 12:21:10-ին ստացված հարցադրումը և դրանց վերաբերյալ 2025 թվականի սեպտեմբերի 12-ին ժամը 15:00-ին տրամադրված պարզաբանումը՝

Հարգելի մրցութային հանձնաժողով,
Հղում անելով մեր նախորդ հարցմանը՝ կապված կայանի տարածքի էլեկտրամատակարարման և հաղորդակցական ենթակառուցվածքների հետ, խնդրում ենք տրամադրել հետևյալ տեխնիկական տվյալները.

Հարցադրում N 1: **Էլեկտրամատակարարման պարամետրեր**
Հստակեցնել հիմնական ցանցի միացման կետի հեռավորությունը (մետրերով) մինչև ռադարի տեղակայման վայր:

Պարզաբանում N 1: Մուտքը դեպի հիմնական էլեկտրացանց և կապի ենթակառուցվածքներ ապահովվելու է պատվիրատուի կողմից:

Հարցադրում N 2: Նշել էլեկտրամատակարարման տեխնիկական բնութագրերը
- Լարման արժեք (V),
- հաճախականություն (Hz),
- հոսանքի արժեք (A),
- ֆազաների քանակ (միաֆազ / եռաֆազ),
- թույլատրելի լարման տատանումներ:

Պարզաբանում N 2: Ձեր կողմից թվարկված տեխնիակական բնութագրերը տրված են Հրավերի Հավելված 5-ի պայմանագրի նախագծի Տեխնիկական Բնութագրի էջ 2-ում «Էլեկտրասնուցումը և էլեկտրական ենթակառուցվածքները» բաժնում

Հարցադրում N 3: Կապի տեսակի ենթակառուցվածքներ
Նշել հիմնական կապի ցանցի միացման կետի հեռավորությունը (մետրերով):
Նշել կապի տեսակը՝ օպտիկամանրաթել, միկրոալիքային կամ այլ:
Եթե նախատեսվում է բջջային կապ (2G/3G/4G/5G), խնդրում ենք տրամադրել տվյալ վայրի չափված կամ հաշվարկված ցուցանիշները՝ ներբեռնման/բեռնման միջին արագություններ (Mbps), միջին լատենտություն (ms), ծածկույթի մակարդակ:

Պարզաբանում N 3: Մուտքը դեպի հիմնական էլեկտրացանց և կապի ենթակառուցվածքները ապահովվելու է պատվիրատուի կողմից:

Հարցադրում N 4: Ճանապարհային հասանելիություն:
Խնդրում ենք հստակ նշել՝ արդյոք տեղակայման վայրն ունի գործող ավտոճանապարհ մինչև ռադարի տեղակայման կետը:
Եթե ոչ, ապա ինչ լրացուցիչ ճանապարհաշինական աշխատանքներ են պահանջվում մատակարարի կողմից:

Պարզաբանում N 4: Ռադիոլոկացիոն կայանի տեղակայման վայրի բոլոր ենթակառուցվածքները ապահովվելու են պատվիրատուի կողմից:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ՇՄՆ-ԲՄ-ԱՊՁԲ-25/11» ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ **Լ.Զոհրաբյանին:**

Հեռախոս՝ (011) 818 529:
Էլեկտրանային փոստ՝ gnumner@env.am:

«ՇՄՆ-ԲՄ-ԱՊՁԲ-25/11» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով